ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2021 թվականի N 109-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սամվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1265568, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0055/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 4-րդ փողոց, 4-րդ փակուղի, N 3 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 24
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2021 թվականի N 110-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» և «բ)» ենթակետերով, 18-րդ կետի «դ)» ենթակետով, հիմք ընդունելով Սուրեն Գալստյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Սուրեն Կնյազի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2-րդ փողոցի 3-րդ փակուղու 11-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0003-0018) ինքնակամ՝ 2015 թվականին կառուցած բնակելի տունը՝ 113,9 քառակուսի մետր, զուգարանը՝ 1,6 քառակուսի մետր և ծածկը՝ 10 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև նկուղում առկա ինքնակամ 1 պատուհանը՝ ձևափոխված դռան:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկներով.
1) բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) դրամ.
2) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 854 (ութ հարյուր հիսունչորս) դրամ.
3) ինքնակամ ձևափոխության համար՝ 1 422 (մեկ հազար չորս հարյուր քսաներկու) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 173 300 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Կնյազի Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հունվարի 15
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2021 թվականի N 111-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումով և հիմք ընդունելով Անահիտ Քամալյանի ներկայացրած հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անահիտ Հրանտի Քամալյանին համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 8 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0208-0019) պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար տալ նախագծման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 25-ին
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 սեպտեմբերի 2021 թվականի N 112-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Դիար, Ռեհան, Ալիկ, Ժաննա և Արմեն Բաբայաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը/ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1265598, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0009-0011/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 5-րդ փողոց, N 3 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական
գ.Գետամեջ